ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2021 թվականի N 159-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի հունվարի 11-ի N 6 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Գարիկ Աղաբեկի Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0024-0013 ծածկագրի 0.088 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (վկայական N 26012018-07-0046) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 23 փողոց N 37 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 23

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 160-Ա

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի և «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների նկատմամբ կիրառել «միանվագ դրամական պարգևատրում» խրախուսանքը՝ նրանց հատկացնելով պաշտոնային դրույքաչափին հավասար գումար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 25

գ. Նոր Արտամետ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 160-Ա ՈՐՈՇՄԱՆ

	ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1.	Հովհաննիսյան Յուրիկ	Համայնքի ղեկավարի պաշտոնակատար	344325 դրամ
2.	Թադևոսյան Ասպետ	Համայնքի ղեկավարի տեղակալ	170000 դրամ
3.	Զաքարյան Արմինե	Աշխատակազմի քարտուղար	190000 դրամ
4.	Հովհաննիսյան Տաթևիկ	Առաջատար մասնագետ	170000 դրամ
5.	Կարապետյան Սուսաննա	Առաջին կարգի մասնագետ	135000 դրամ
6.	Մանուկյան Աղավնի	Առաջին կարգի մասնագետ	135000 դրամ
7.	Տոնյան Լարիսա	Հավաքարար	90000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2021 թվականի N 161-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 62 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի՝ 2020 թվականի հուլիսի 21-ի «Աճուրդային հանձնաժողով ստեղծելու մասին» N 62 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «Յուրիկ Հովհաննիսյան՝ համայնքի ղեկավար» բառերը փոխարինել «Ասպետ Թադևոսյան՝ համայնքի ղեկավարի տեղակալ» բառերով.
   2) Որոշման 3-րդ կետում «համայնքի ղեկավար Յուրիկ Հովհաննիսյանին» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարի տեղակալ Ասպետ Թադևոսյանին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 25

գ. Նոր Արտամետ